Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14 JUL 2009

132
Ա-45
Կար
1ր.
14

ԲԺՇԿԱՊԵՏ ԿԱՐ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ

ՀՈԳԵԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄՆ

ԵՒ

ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
СССР Ереванская Гос. Библиотека
7/XI 1922
ԱՆՈՒՆԱՅ, Մասին и на
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

Արաքատիպ Ա.ՊՈՒԹԱՖԵԼԱՃԵԱՆ, Նիկ. 21.
ԹԻՖԼԻՍ 1905

05.02.2013

3459

Дозволено цензурою, Тифлисъ, 30-го Апрѣля 1905 г.

ՀՈԳԵԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄՆ ԵՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Թէ մի անձն կարող է հոգեկան ազդեցութիւն գործել մի ուրիշի վրայ-այդ անհերքելի ճշմարտութիւն է, իրողութիւն է։ Զանազան անհատներ ազդել են նոյն իսկ պատմութեան ընթացքի վրայ, առաջ են եկել յեղափոխութիւններ և ստեղծուել են պատմական խոշոր շրջաններ։ Հին դարերում պակաս չեն դէպքեր, երբ անհատները ահագին ազդեցութիւն են ունեցել անձնաւորութեանց և նոյն իսկ ամբոխի վրայ։ Մեզ համար նշանակութիւն ունին այնպիսի դիպուածներ, երբ անհատը ազդել է մէկի, մի քանիսի կամ բազմութեան վրայ և այդ ազդեցութեան տակ կատարուել են շատ անգամ անմիտ, տարօրինակ, երբեմն էլ կատարողների համար իսկ ՁԼասակար ու վտանգաւոր գործեր։ Դիւահարութիւնները, խելացնոր գաղափարները, աղանդները զարմանալի արագութեամբ էին տարածւում, տիրում էին քաղաքներ ու գաւառներ և ինկվիզիցիայի ու այլ բռնի միջոցների զոհերի թիւն ստուարացնում։ Այդ տեսակ անմիտ ու հիւանդ գաղափարները, ցնորական, տարօրինակ, երբեմն էլ ՁԼասակար հոսանքները ծաւալ են ստացել յաճախ միմիայն պարզ նմանողութեան ազդեցութեան տակ։ Դեռ Պլուտարքոսը յիշատակում է ինքնասպանութեան վարակման մասին։ Դէօթէի յայտնի վէպի, «Երիտասարդ Վերտերի տանջանքները» երևան գալուց յետոյ, շատ երիտասարդներ իրենց մատաղ կեանքին վերջ դրին ինքնասպանութեամբ։ 1878—79 թուականում Իտալիայի Վիրջինիս գիւղաքաղաքում դիւահա-

բութեան գաղափարը այնպիսի ջղային քայքայումն առաջ բերեց կանանց մէջ և այն աստիճան յուզուեցին բնակիչները, որ խաղաղութիւնը վերականգնելու համար կարիք եղաւ զէնքի ուժին դիմելու։ Տարօրինակ մոդաները, անմիտ և սնահաւատ բարքերը գեղարուեստի այլանդակ ուղղութիւնները, կրօնական աղանդները—յաճախ ծայրայեղ մոլեռանդութեան հասցրած, այս ամենը երևոյթների հիմքը՝ հոգեկան ներշնչումն և ախտաբանական նմանողութիւնն է։ Ախտաբանական ենք անուանում այն ներշնչումը, որը կատարել է տալիս պայմաններից չբղխող արարմունքներ և հիւանդ գաղափարներ։ Պէտք է ի նկատի ունենալ, որ տկար կամ հիւանդ ենք անուանում այն գաղափարը, որը անմիտ է և քարոզողի տեսակէտից—եթէ նա դատելու ընդունակ լինէր։ Եթէ տգէտ մարդը բնութեան երևոյթների նկատմամբ որևէ սնահաւատ գաղափար է յայտնում—դրա պատճառը միմիայն նրա անծանօթ լինելն է գիտական փաստերի հետ։ Բաւական է որ նա ծանօթանայ բնութեան երևոյթների բացատրութեանց հետ՝ իբրև դատելու ընդունակ մարդ, առողջ եզրակացութեան կգայ։ Բայց եթէ փաստերի կամ գիտական բացատրութեանց հետ ծանօթ լինելով հանդերձ մարդ նոյն անմիտ, անկապ կամ տարօրինակ մտքերն է յայտնում, կամ եթէ նա անձեռնհաս է ուղիղ դատելու և շահագործելու իւր մտաւոր պաշարը, այդ դէպքում տարօրինակ գաղափարը ոչ թէ սխալ է կոչւում, այլ ցնորական։ Մեզ համար կարևոր են այն պարագաները, երբ հիւանդ մտքեր կամ տարօրինակ արարմունքներ ներշնչւում են այնպիսի անձանց, որոնց ուղեղը ըմբռնում է այդ մտքերի անհիմն լինելը։ Իբր մի հասարակ ապացոյց ասածներիս — յիշենք այն յաճախակի դէպքերը, երբ հոգեկան հիւանդները ազդում են ոչ միայն հիւանդանոցների սպասաւորների, այլ և բժիշկների վրայ։ Հոգեկան հիւանդների ցնորքների բովանդակութեան վրայ մեծապէս ազդում են

շրջապատող կեանքի երևոյթները։ Հոգեբանի կամ հոգեկան հիւանդութեան բժշկի համար, ինչպէս նաև փորձնական հոգեբանութեան, հասարակական գիտութիւնների, մանկավարժութեան և քրէական մարդաբանութեան ուսումնասիրութեան նկատմամբ, վերին աստիճանի հետաքրքրական և ուշագրաւ խնդիրներ են՝ հոգեկան հիւանդների փոխադարձ ազդեցութիւնը միմեանց վրայ, առողջ մարդկանց փոխադարձ ազդեցութիւնը և միմեանց նմանելու ձգտումը. վերջապէս, առողջների հոգեկան ազդեցութիւնը հոգեկան հիւանդների վրայ և ընդհակառակն։ Հիպնոտիզմի ուսումնասիրութիւնը այդ խնդիրների հետ սերտ կապուած է։ Հոգեկան հիւանդութեանց գիտական գրականութեան մէջ նկարագրուած կան շատ դէպքեր, երբ հոգեկան հիւանդի ցնորքները ներշնչուել են ուրիշ հոգեկան հիւանդներին, երբեմն էլ միանգամայն առողջ մարդկանց։ Ես ինքս առիթ ունեցայ 1903 թ. ամրանը ուսումնասիրելու հոգեկան հիւանդ ամուսինների Պետերբուրգի բբ. ժշկական ճեմարանի հոգեկան հիւանդներին յատկացրած կլինիքայում։ Ամուսինը մի շատ կրթուած սպայ էր բռնուած ծանր հոգեկան հիւանդութեամբ։ Նորա ցնորքը մեծութեան և հալածանքի գաղափարներն էին։ Նա հաւատացնում էր, որ ինքն առաքեալ է և ուղարկուած է աշխարհ Փրկչի երկրորդ գալստեան համար մարդկութիւնը նախապատրաստելու և ապաշխարութիւն քարոզելու։ Նա հմուտ էր պատմութեան և զանազան պատմական դիպուածները մեկնում էր Յովհաննու յայտնութեամբ (апокалипсисъ)։ Ինչպէս պատմում էին, նա իւր ապագայ կնոջը առաջարկութիւն էր արել հէնց առաջին անգամից, երբ ծանօթացել էր օրիորդի հետ։ Այն ժամանակ տկարութիւնը թէև սկսուած է եղել, բայց նա թագցնելիս է եղել իւր ցնորքները և շրջապատողները նորան համարելիս են եղել իբր տարօրինակ անձնաւորութիւն, առանց կասկածելու, թէ նա հոգեկան հի-

ւանդ է։ Կինը նույնպես մանկութիւնից ի վեր տարօրինակ բնաւորութիւն է ունեցել։ Նա բժշկի աղջիկ է և շատ լաւ կրթուած է եղել իւր փեսացուին պատահելիս։ Երբ հիւանդ փեսացուն ստացել է օրիորդի համաձայնութիւնը, անմիջապէս ցանկացել է հրաժարուել ամուսնութիւնից և գնալ օգնելու Բոէրներին ընդդէմ Անգլիացոց։ Սակայն զիջանելով իւր հարազատների և նրա մօր թախանձանքին՝ ամուսնացել է։ Հարկ եմ համարում նկատելու, որ հիւանդի ողջ ընտանիքն էլ օժտուած էր տարօրինակ յատկութիւններով։ Բացառութիւն չէր կազմում հիւանդ սպայի բժիշկ անները։

Ամուսնանալուց յետոյ հիւանդ սպան սկսել է ներշնչել կնոջը իւր անմիտ գաղափարները։ Պատմելիս է եղել նրան իւր տեսիլքների մասին։ Ցոյց էր տալիս սենեակի անկիւնը և հաւատացնում իւր կնոջը, որ այնտեղ կանգնած է ինքը Փրկիչը։ Կինը սկզբում զարհուրում էր, չէր հաւատում նրա ասածներին, ընդդիմադրում էր, բայց տակաւ առ տակաւ ինքն էլ է սկսում հաւատալ, ինչ որ ձայներ լսել, մինչև անգամ տեսիլներ տեսնել և իւր կողմից ևս սկսում է մարդու ցնորքները զարգացնել և արծարծել։ Այր և կին միասին շրջում էին, օգնում էին աղքատներին և իրենց քարոզներով մարդկանց պատրաստում Փրկչի գալստեանը։ Երբ նոքա հիւանդանոց մտան, այլ ևս միմեանց չէին պատահում։ Որպէս զի որոշէի կնոջ ներշնչման ենթարկուելու աստիճանը, ես սկսեցի ներշնչել նորան, որ Փրկչի առաքեալը ոչ թէ նրա ամուսինն է, այլ ես եմ, որ մենք նրա հետ վաղուց ծանօթ ենք և այլն։ Նա սկզբում վրդովւում էր, զրդռւում և նոյն իսկ սպառնում էր և կամաց կամաց ինձ հետ համաձայնում։ Ես ներշնչում էի նրան տեսիլքներ տեսնել, ձայներ լսել և նա տեսնում էր, նա լսում էր...։ Հետզհետէ ուսումնասիրելով հիւանդութեան բոլոր պարագաները, սկսեցի ներշնչել առողջ գաղափարներ և բուժել նրան բժշկական միջոցներով։ Անջատուած

իւր ամուսնուց, հեռու նրա ազդեցութիւնից, կինը բժշկւում էր և երբ ես գիտնական ժողովներից մէկում ցոյց էի տալիս նրան, նա համարեա բոլորովին առողջ էր։ Մի ուրիշ դէպք։ Անցեալները ինձ հրաւիրեցին բժշկելու մի օրիորդի, որ հոգեկան ծանր վիճակի մէջ էր։ Նա վճռել էր մեռնել իւր ընկերուհու հետ միատեղ, ինքնասպանութիւն գործելով։ Ընկերուհին անմիջապէս մեռել էր գնդակի հարուածից, իսկ իմ հիւանդը պատահմամբ ողջ էր մնացել։ Ինքնասպանութեան պատճառը կեանքի ձանձրոյթն էր եղել։ Նմանօրինակ դէպքեր շատ են գիտական գրականութեան մէջ։

Ի նկատի ունենալով բնական և հիւանդ հոգեկան ազդեցութեան նշանակութիւնը, անհրաժեշտ է տեղեկանալ, թէ ինչպիսի արտաքին և ներքին պայմանների տակ և ինչ եղանակով է տեղի ունենում բնական և ախտաբանական ներշնչումն ու նմանողութիւնը։

Մեզ, բժիշկներիս, յայտնի է, որ հոգեկան հիւանդների ազգականները կամ շրջապատողները շատ անգամ հաւատացնում են բժշկին, որ իրանց որդին, ազգականը կամ բարեկամը ցնորուած չէ։ Նոքա մի կողմից խղճում են հիւանդին, միւս կողմից յուզուած լինելով, չեն ընդունում հիւանդի ասածները կամ արարմունքները։ Այդ տեսակ դէպքերը բնական և սովորական երևոյթներ կարելի է համարել, եթէ առողջ մարդիկ այդպիսով միայն իրենց ներողամտութիւնն են արտայայտում դէպի հիւանդը առանց նորա գաղափարների հետ համաձայնելու։ Այդ ներողամտութեան դէպքերից մինչև առողջ անձանց ցնորքներ իրացնելը զանազան աստիճաններ կան։ Դժուար է սակայն սահման որոշել, որից յետոյ ներշնչուողին կարելի է հոգեկան հիւանդ համարել թէ հասարակական և թէ օրինական տեսակէտից։ Մօտաւորապէս կարելի է ասել, թէ հոգեկան հիւանդութիւնը սկսում է այն վայրկեանից, երբ առողջ մարդը այլ ևս չէ հերքում հիւանդի գաղափարները և ցնորք չէ համա-

րում։ Այս դէպքում մեզ համար միևնոյն է, թէ ինչն է այդ փոփոխութեան պատճառը. արդեօք տեսողութեան, լսողութեան և այլ զգայարանքների սխալ տպաւորութիւնները թէ մի այլ հանգամանք։ Եթէ նա տեսնում է տեսիլքներ և լսում է ձայներ, այդ սխալ տպաւորութիւնները ինքն ըստ ինքեան բաւական են, որ նորա միտքը շեղուի իւր ուղղութիւնից։ Այդ տպաւորութեանց յեղաշրջման պատճառը ծանրակշիռ է և երբ շնորհիւ դրդռուած ուղեղի հիւանդը դատարկ սենեակում տեսնում է մարդիկ, դևեր, հրեշտակներ և լսում է ձայներ՝ նորա դատողութիւնը արդէն շեղուել է իւր ճանապարհից և առողջ մտածողութեան շրջանից։ Հէնց որ ներշնչում է անհատը, սկսում է ներշնչող հիւանդի ցնորքը ճշմարտութիւն համարել և անկախ մշակել ու արծարծել, նա արդէն անկասկած հիւանդ է։ Եւ եթէ ներշնչողը մտաւորապէս թոյլ է կամ տրամադիր է խելագարութեան, կարող է պատահել, որ ներշնչողը առողջանայ, իսկ ներշնչողը աւելի ուշ առողջանայ կամ անբուժելի հիւանդ մնայ։

Պատահում է, որ երկու հոգի (մեծ մասամբ երկուորեակներ) նոյն պայմանների մէջ ապրած, նման կազմուածքով, հաւասար զարգացմամբ և այլն, միմեանցից միանգամայն անկախ ենթարկւում են նոյն և նման առողջ կամ հիւանդ գաղափարների և նման գործեր կատարում։

Ներշնչուող անհատի համար բաւական կարևոր պայման է նորա ժառանգական յատկութիւնները թէ ֆիզիքական և թէ մտաւոր կազմուածքի կողմից։ Սրանից չի հետևում, որ ներշնչուողի հայրը, մայրը կամ պապը անպատճառ պէտք է հոգեկան հիւանդութիւն ունեցած լինին։ Ամենևին ոչ։ Մեզ համար կարևոր է միայն այն, որ ներշնչուողը, չնորհիւ իւր ծնողների վատ կամ քայքայուած առողջութեան, որ հետևանք կարող է լինել ոգելից ըմպելիքների, սիֆիլիսի, սովի, ծանր աշխատանքի, վախի և այլ հանգամանքների, ժառանգել է առհասարակ թոյլ կազմուածք ֆիզիքապէս և ի մասնաւորի ուղեղի նկատմամբ։ Ի հարկէ կարող է մի անդամը աւելի թոյլ լինել քան միւսը. մի խօսքով այդպիսի անձինք թոյլ են լինում, զուրկ հաւասարակշռութիւնից և արատաւոր ժառանգականութեան պտուղ։ Կարիք չկայ նոյնպէս, որ ներշնչողը և ներշնչուողը աղգականներ լինեն-ինչպէս մի քանիսները ենթադրում են. ամեն մէկը առանձին կարող է ունենալ իրեն յատուկ ժառանգական թոյլ կազմուածքը (օրինակ՝ երկու ընկերներ, ամուսիններ և այլն)։ Բացի ժառանգական պակասաւոր յատկութիւններից, ներշնչողի համար վնասակար հետևանքներ կարող են ունեցած լինել մինչև ներշնչուելը այլ և այլ հանգամանքներ, որոնք և նպաստած կլինեն հոգեկան հաւասարակշռութեան կորցնելուն։ Նշանակութիւն ունի նաև ներշնչողի և ներշնչուողի մէջ եղած սերտ և երկարատև բարոյական ու մտաւոր կապը և նմանութիւնը, մանաւանդ երբ երկուսն էլ միասին են լինում և հեռի արտաքին աղդեցութիւններից։ Կարևոր պայմաններից մէկն էլ մէկի մտաւոր հեղինակութեան և կամքի ոյժի գերակշռութիւնն է. թէև պատահում է որ կամքից ուժեղ անձնաւորութիւնը հոգեկան հիւանդութեան տրամադիր լինելով՝ իւր ցնորքի բովանդակութիւնը աւելի թոյլ մարդուց է վերցնում։ Դիւրութեամբ ներշնչւում են այն գաղափարները, որոնք ներշնչուողի տեսակէտից աւելի մօտ են իրականին։ Անմիտ, անբնական ու վերացական ցնորքները աւելի դժուար են ներշնչւում քան իրականութեան մօտիկ, մեծութեան հալածանքի և այլ ցնորքները, մանաւանդ եթէ այդ գաղափարները փոքր ինչ տրամաբանական կապ ունին ու աւելի մշակուած են։ Ներշնչուելու տրամադիր մարդիկ աւելի հեշտ են ներշնչւում մանուկ կամ ծեր հասակում։ Կանայք աւելի են տրամադիր ներշնչման քան տղամարդիկ։ Ի մասնաւորի կանանց նկատմամբ պէտք է ասել, որ նրանց ֆի-

զիքական կազմուածքի մի քանի երևոյթներ (որդեծնութիւն, յղութիւն, կանանց դաշտանը և այլն) որոշ ազդեցութիւն ունին նրանց հոգեկան աշխարհի վրայ։

Ներշնչուողը աւելի շատ է ընդունում այն ցնորքները, որոնք համապատասխանում են իւր ձգտումներին և կրքերին։ Հալածականութեան ցնորքը համապատասխանում է մարդկային կասկածամտութեան։ Ներշնչուողը սովորաբար հարուստ երևակայութեան տէր և դիւրահաւատ մարդ է լինում։ Նրան հմտելի են ինտրիգաների որակը և քանակը, կռուի խորհրդաւոր կերպարանքը։ Իսկ եթէ մեծութեան ցնորքն և հալածանքի գաղափարը որոշ կապով կապուած են, այդ դէպքում ներշնչուողի փառասիրութիւնն աւելի է ձգտում թափանցել այդ իրեն հաճելի ցնորքների շրջանը։

Հոգեկան հիւանդութիւնների տեսակները որոշելիս ընդհանրապէս մենք չենք առաջնորդւում միայն ցնորքի տեսակով։ Մենք ուշադրութեան ենք առնում մի շարք բնական և հոգեբանական բնորոշ գծեր, որովհետև առերևոյթ նման (մեծութեան, կասկածանքի և այլն) ցնորական պատկերները, տեսիլքները, լսողութեան և այլ զգայարանքների սխալ տպաւորութիւնները կարող են զանազան հոգեկան հիւանդութեանց ժամանակ բոլորովին նման լինել։ Միակ միջոցը ֆիզիքական և հոգեբանական հետազօտութիւնն է, որ մեզ հնարաւորութիւն է տալիս հիմնուելով մեր ձեռքում ունեցած ապացոյցների, ժառանգականութեան կամ երբ և իցէ ունեցած հիւանդութեանց վրայ, մի որոշ եզրակացութեան գալ։

Խելագարութիւնը մի ախտաբանական երևոյթ է, որը այս կամ այն կերպ, տարբեր ուժգնութեամբ խախտում է մարդուս հոգեկան ընդունակութեանց (միտք, բանականութիւն, կամք, յիշողութիւն և այլն) մեր ըզգայարանքների կենդրոնը—ուղեղը, և այդպիսով յեղաշրջում է մեր զգայարանքների շփոթութիւնը և սխալ

տպաւորութիւնների (տեսիլքներ, ձայներ և այլն) աղբիւր ստեղծում։ Խելագարութիւնը—այսինքն ուղեղի խախտումը, որոշ չափով ազդում է և մարդուս ֆիզիքական կազմուածքի վրայ։ Այդ ամեն երևոյթների ուսումնասիրութիւնը շատ բարդ ու դժուարին գործ է։

Շատ անգամ հոգեկան հիւանդը պաշարուած է ցնորական մտքերով, որովհետև նրա զգայարանքների կենդրոն-ուղեղը գրգռուած է։ Նա իր մտաւոր պատկերները տեսնելով շրջապատող առարկաների մէջ և լսելով գոյութիւն չունեցող ձայներ և այլն, սխալ է ըմբռնում շրջապատող կեանքը, որովհետև նրա մտաւոր աչքը, ականջը և այլն նորան այլ ևս հաւատարիմ չեն, նրան խաբում են։ Նա պարզ տեսնում է Փրկչին. նա լսում է ձայները, որոնք պնդում են որ նա յանցաւոր է, հրէշ է, վերջապէս նա կորցնում է իւր մտաւոր հաւասարակշռութիւնը և անմիտ ու անկապ ցնորքների հեղինակ դառնում։ Բայց լինում են դէպքեր, երբ մտաւոր աշխարհը խախտւում է անկախ զգայարանքից։ Հիւանդը առողջ մարդու պէս արտաքին աշխարհի մասին ճիշտ տպաւորութիւններ է ստանում. նա ամեն բան տեսնում է, լսում է և զգում է. բայց իւր տեսածին լսածին տարօրինակ բացատրութիւն է տալիս։ Անցորդները իրար հետ խօսելով գնում են. հիւանդը որսում է նրանց անմեղ խօսքերը և իրր ակնարկ ընդունում իւր անձի վերաբերեալ։ Ամեն մի խօսք, ժպիտ նա իրեն է վերագրում։ Այդ տեսակ հիւանդների զգայարանքները երբեմն սխալ տպաւորութիւններ են հաղորդում, բայց այդ տպաւորութիւնները սակաւաթիւ են և համապատասխան նրա անմիտ գաղափարներին։ Այդ հիւանդները մեծ մասամբ արատաւոր ժառանգականութեան սերունդներ են։ Ամեն մի երևոյթ նոքա կենդրոնացնում են իրենց անձի շուրջը. նոքա խորամանկ են լինում սովորաբար, ունենում են կամքի ոյժ, դատում են սխալ ըմբռնած փաստերի հիման վրայ, սակայն առերևոյթ

դատում են տրամաբանօրէն։ Երկար տարիներ շարունակ այդ հիւանդները իրենց զոհ են համարում անարդար հալածանքի և վերջ ի վերջոյ ընկճւում են, գալիս են այն եզրակացութեան, որ իրենք այն անձնաւորութիւնը չեն, ինչ որ մինչև այդ օրը կարծում էին. նոքա իրենց պաշարուած են տեսնում թշնամիներով, հնարում են ինտրիգներ և վճռում վերջապէս, որ իրենք մեծ մարդիկ են, որ նախանձն է իրենց հալածանքի պատճառը. կամ երբեմն էլ իրենց չարագործ ոճրագործ են համարում, որը արժանի է պատժի։ Անհնարին է նոցա ապացուցանել իրանց սխալը, որովհետև նոքա ձուլուած են իրենց ցնորքների հետ և ամեն բան իրենց համար պարզ են համարում։ Նոքա այնքան վստահ են իրենց ցնորքների ճշմարտութեանը, որ կարող են ցնորական մտքերից դրդուած սպանութիւն գործել և դատաւորներին շփոթեցնել, հաւատացնելով որ իրանք հալածուած են։ Անտանելի են այդ հիւանդները թէ աղդականների, թէ բժշկի և թէ խնամատար ծառաների համար։ Նենդաւոր մտքերով լի է նրանց գլուխը, վրէժի ծարաւը միշտ անյագ։ Այս հիւանդները շատ վտանգաւոր են։ Նոքա իրենց աղդեցութեանն են ենթարկում թոյլ և ջղային մարդկանց։ Նոքա ընդունակ են տանջել դատաւորներին, ամբոխի գլուխ կանգնել և առաջնորդել ի կատարում իրենց ցնորական մտքերի։ Նոքա կարող են կրօնական աղանդներ ստեղծել և ամենածանր ոճիրների դեկավար լինել։

Ինչ վերաբերում է հոգեկան հիւանդների միմեանց վրայ ունեցած աղդեցութեան, պէտք է նկատել, որ սովորաբար միմեանց չեն հետաքրքրում։ Իւրաքանչիւրն զբաղուած է իրեն անձով և իր ցնորքներով, բայց պատահում է, որ աղդում են միմեանց վրայ։ Օր. մի հոգեկան հիւանդ հիւանդանոցում սկսեց քարոզել Ս. Տեղեաց ազատելու և հիւանդների կացութիւնը բարւոքելու անհրաժեշտութեան մասին։ Նա իր քարոզներով աղ-

դեց միւս հոգեկան հիւանդների վրայ և նրանցից իւրաքանչիւրը տարբեր կերպով իւրացրեց նրա ցնորական գաղափարները։ Իբր միջոց հիւանդների դրութեան բարւոքման մէկ հիւանդ առաջարկում էր գնել կարմիր և կապոյտ մատիտներ և բաժանել հիւանդներին և նոցա ազգականներին։ Անբարոյական հակումներ ունեցող հոգեկան հիւանդը այդ քարոզչի ազդեցութեան տակ վճռեց ծառայել Աստծուն և այլն։

Ներշնչման և նմանողութեան երևոյթների բնախօսական էութիւնը թէ առողջ և թէ հիւանդ մարդերի ու վարմունքների ներշնչման ժամանակ, կամքի և գիտակցութեան որոշ մասնակցութեամբ, միևնոյն է։ Ոմանք այդ համեմատում են և հաւասարեցնում գերագոյն ռէֆլէքսների հետ, աւելացնելով թէ այն գաղափարների ու արարմունքների համար, որոնք ներշնչեալի տեսակէտից ախտաբանական և հիւանդ երևոյթ կարելի էր համարել, անհրաժեշտ են ներշնչեալի կողմից տրամադրութիւն և պայմաններ, որոնց հետ փոքր ինչ առաջ ծանօթացանք։ Ռէֆլէքս է կոչւում այն գործողութիւնը կենդանի մարմնում, որը ինքնաբերաբար է առաջ գալիս իբրև պատասխան մի որև է գրգռման. օր. եթէ նոր գլխատուած գորտի թաթը գրգռենք, իսկոյն ևեթ թաթը կցնցուի. նոյն փորձը կարելի է կատարել և կենդանի գորտի վերայ, երբ նոյն իսկ գիտակցութիւնն ու կամքը միանգամայն արթուն են։ Վերջին պարագան ի հարկէ կարող է աղդել որոշ կերպով այդ մեքենայական գործունէութեան վրայ, բայց իրողութիւնն այն է, որ գործողութեան հիմքում որոշ անկախութիւն կայ։ Ինչպէս ասացինք, շատերը ներշնչման և նմանողութեան հիմք են համարում, նոյն իսկ գիտակցութեան և կամքի արթուն ժամանակ, կենսական մեքենայական սկզբունքը, աւելացնում են միայն, որ այդ մեքենան հոգեբանական է և աւելի բարձր, քան այն մեքենան, որ գործում է մեռած գորտի թաթում։

Ներշնչման և նմանողութեան ֆիզիքական և բնախօսական էութիւնը բացատրելու համար ուրիշները այլ մեկնութիւն են առաջարկում, որ հիմնուած է որոշ բնագիտական սկզբունքի վրայ, որ ոյժը—էներգիան բնութեան մէջ չի ոչնչանում, ինչպէս և նիւթը։ Նոքա ասում են, որ շրջապատող մեռեալ բնութեան ֆիզիքական ոյժերը (լոյս և այլն) ազդելով կենդանի արարածի վերայ, փոխւում են ֆիզիքականից բնախօսականի, իսկ վերջինս – հոգեկանի։ Հոգեկանը նորից վերափոխւում է բնախօսականի, առաջացնելով կենդանի արարածի մէջ շարժողութիւն, ձայն և այլն։ Այդ գործողութեանց ժամանակ բնախօսական ոյժը ֆիզիքական է դառնում, օրգանիզմից դուրս է ելնում, ազդում է ուրիշների վրայ, ենթարկւում է նոյն փոփոխութիւններին և ուրիշի մէջ արթնացնում նոյն մտքերը, նոյն զգացմունքները և գործողութիւնները։

Ինչպէս էլ բացատրելու լինին ներշնչման և նմանողութեան բնախօսական էութիւնը, յամենայն դէպս այս խնդիրը չի կարելի վերջնականապէս լուծուած համարել։ Դեռ ևս անհրաժեշտ է ներշնչումը ուսումնասիրել փորձնական ճանապարհով հիպնոտիզմի ժամանակ, առողջների ու հիւանդների փոխադարձ ազդեցութիւն գործելիս հիւանդանոցներում, սովորական կենցաղում, առանձին անհատների ազդեցութեան տակ կատարուած բազմամարդ բնական և ախտաբանական շարժումների ժամանակ, որպէս զի կարելի լինի աւելի լաւ ծանօթանալ ներշնչողի թէ ներքին և թէ արտաքին կազմուածքի պարագաների և թէ բնախօսական կազմակերպութեան հետ։ Թէ ինչումն է կայանում ներշնչման հոգեկան էութիւնը, կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ (ներշնչման) անհատի «ես»-ը որպէս դատող և ինքնուրոյն գործող կամքի և գիտակցութեան սկզբունք արթուն կացութեան մէջ զանց է առնում և անձնաւորութեան համար «ես»ից դուրս գաղափարներ ու արար-

մունքներ պատրաստւում։ Այս էլ ուսումնասիրութեան և հետազօտութեան լուրջ խնդիր է։ Անհրաժեշտ է ուսումնասիրել և փոխադարձ ներշնչումը, ինչպէս և ինքնաներշնչումը։ Մեզնից ամեն մէկը որոշ չափով ընդունակ է թէ ներշնչելու և թէ ներշնչուելու և եթէ այդ ընդունակութիւնը արտաքին և ներքին պայմանների որոշ ազդեցութեան տակ, ախտաբանական երևոյթների շրջանին է մտնում, պէտք է չմոռնալ, որ այդ պարագան դիտական կարևորութիւնից զատ ունի և իւր գործնական մեծ նշանակութիւնը։ Շատ շատերը հերքում են անհատի ազդեցութիւնը կեանքի հոսանքի վերայ։ Այդպիսիները պնդում են, որ մի անձն ամենաշատը կարող է լինել արտայայտիչ դարեշրջանի, կամ ժամանակի պէտքերի ու պահանջների, և ոչ ստեղծիչ որոշ հոսանքի։ Մեր նպատակից դուրս է այդ խնդրի վրայ երկար կանգ առնելը, բայց կարևոր ենք համարում հարևանցի նկատել, որ այդպէս խօսողները մոռանում են ներշնչման զօրեղ ազդեցութեան մասին։ Ներշնչումը մի վիթխարի ոյժ է արտասովոր անհատի ձեռին. նա այդ ոյժով կախարդում է ամբոխին և առաջնորդում կատարելու մեծամեծ գործեր, որոնց անջինջ հետքերը դարեր շարունակ փայլում են անխաւար ապագայ կեանքի հոսանքում և պատմութեան էջերում արձանագրւում։ Ուրիշ պայմաններում գուցէ նոյն անձը կարող էր տկար ու անմիտ գործերի ղեկավար լինել հասարակութեան համար։ Անտարակոյս առողջ թէ հիւանդ մտքեր ու գործեր իրագործելու ու իւրացնելու համար որոշ պայմաններ անհրաժեշտ են և անձնաւորութիւնը սահմանափակուած է իւր կամքի սաւառնումների նկատմամբ, բայց և այնպէս անձնաւորութեան նշանակութիւնը բացասելուց առաջ շատ և շատ երևոյթների մասին պէտք է խորհել։ Սորանով ես չեմ անվերջ ընդլայնում անձնական սկզբունքի նշանակութիւնը, բայց անձնական սկզբունքը լինի նա հետեւանք ներքին կազմուածքի թէ արտաքին

պայմանների, կայ և կմնայ իբր մի զօրեղ գործօն այժ և թերևս կեանքը այնքան էլ մեքենայական բաղադրութիւն չէ, որպէս կարծում են շատերը։

Ընդունելով բնական ու ախտաբանական ներշնչման էութիւնը, մենք ձեռնհաս ենք մաքառել հասարակութեան մէջ տարածուող համաճարակ հոգեկան հիւանդութեանց և անընական ձգտումների դէմ։ Մեզ համար հնարաւոր է դառնում առողջապահական ընթացք տալ հոգեկան հիւանդների խնամատարութեան ու բանտարկեալների վրայ, դպրոցներում ուսանող մանուկ սերընդի դաստիարակութեան ու հասարակական ու ամբոխային սովորական յարաբերութեանց։ Կարելի է ի ընէ ախտաբանական ներշնչման տրամադիր անձի մէջ ներշնչելով իսկ զարգացնել անձնական անկախութեան ոգին, ինքնուրոյնութիւն ու սկզբունքի գաղափար։ Մեր շշափած խնդիրների ուսումնասիրութիւնը շատ կարեւոր է մանկավարժների համար ինքնուրոյն, հոգւով զօրեղ ու մարմնով կորովի սերունդ կրթելու համար։ Ախտաբանական ներշնչումը որպէս ցնորական գաղափարներ թէև յաճախ չեն պատահում, բայց անտարբեր երիտասարդներն ու պատանիք, որոնք զուրկ կլինեն ջերմ ու վսեմ բաղձանքներից, գաղափարական ձգտումներից, հոգեպէս էլ թոյլ ու անհաստատ-դիւրապէս կարող են խոնարհել ամեն մի աննշան ազդեցութեան տակ, ու կորցնելով իրենց «ես»-ը, յուսահատուել ու անպէտք էակներ դառնալ կեանքի համար։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐ
7
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Ա.

«Ազգային գրադարան»
NL0152631